

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Անահիտ Բախշյանի, Լարիսա Ալավերդյանի, Զարուհի Փոստանջյանի, Ստյոպա Սաֆարյանի, Արմեն Մարտիրոսյանի և Բաֆֆի Հովհաննիսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի՝ պետական կազմակերպության գործադիր մարմնի գործառույթներն իրականացնող անձի հետ

կնքվում է պայմանագիր, որը հիմնադրի անունից ստորագրում է լիազորված պետական մարմնի ղեկավարը: Տվյալ դեպքում լիազորված պետական մարմնի ղեկավարը հանդես է գալիս որպես գործատու և իր վրա է վերցնում կոնկրետ աշխատանքային պայմանագրի կնքման հետ կապված ամբողջ պատասխանատվությունը: Մասնավորապես, խոսքը վերաբերում է գործադիր մարմնի գործառույթներն իրականացնող անձի գործունեությանը, հետագայում աշխատանքային պայմանագիրը լուծելու հնարավորությանը և այլն: Մինչդեռ պետական կազմակերպության խորհուրդը, լինելով կոլեգիալ մարմին, չի կարող անհատական պատասխանատվություն կրել գործադիր մարմնի գործառույթներն իրականացնող անձի գործողությունների համար, և, բացի դրանից, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի համաձայն կոլեգիալ մարմինը չի կարող հանդես գալ որպես գործատու:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Գևորգ Մալխասյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-828-16.02.2010-ՏՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին

Հոդված 1. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հոկտեմբերի 23-ի ՀՕ-248 օրենքի (այսուհետ՝ օրենք) 14-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետում «կարգով» բառը փոխարինել «դեպքում» բառով:

Հոդված 2. Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին նախադասության «դեկավարը» բառից հետո լրացնել «, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ» բառերը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ**

Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը. Իրավական ակտի ընդունումը պայմանավորված է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին Հայաստանի Հանրապետության գործող օրենքում առկա հակասությունը վերացնելու անհրաժեշտությամբ:

Կարգավորվող հարաբերությունների ներկա վիճակը եւ առկա խնդիրները. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին Հայաստանի Հանրապետության գործող օրենքի

14-րդ հոդվածի 2-րդ մասի ա) կետի, 15-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 19-րդ հոդվածի գ) կետի միջև առկա է ներքին հակասություն: Օրենքի առկա շարադրանքից բխում է, որ այն դեպքերում, երբ գործադիր մարմնի գործառույթներն իրականացնող անձի հետ կնքվող աշխատանքային պայմանագիրը հիմնադրի որոշմամբ վերապահվել է պետական ոչ առևտրային կազմակերպության կողեգիալ կառավարման մարմնին, ապա այդ պայմանագիրը պետք է ստորագրի նաև պետական լիազոր մարմնի ղեկավարը, այսինքն՝ այդ պայմանագրի հաստատումը վերապահվել է երկու մարմինների, ինչը, ըստ էության, իրատեսական չէ: Այս հանգամանքը հաստատվել է Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության կողմից 2009թ. փետրվարի 18-ի N է 877 գրությամբ:

Հիշյալ հակասությունն արդեն իսկ հասցրել է կոլեգիալ կառավարման մարմին ունեցող պետական ոչ առևտրային կազմակերպություններում տնօրենի ընտրությունից հետո տարատեսակ մեկնաբանությունների տեղիք տալ:

Առաջարկվող լուծումները. Արդարադատության նախարարության առաջարկության համաձայն կոլեգիալ կառավարման մարմնի առկայության պարագայում ընտրված տնօրենի հետ աշխատանքային պայմանագիրը պետք է հաստատվի խորհրդի կողմից:

Համաձայն «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ «Պետական ուսումնական հաստատության խորհուրդը, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, ընտրում է տնօրեն եւ հիմնադրի անունից նրա հետ կնքում աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի փորձագիտական եզրակացության հիման վրա վաղաժամկետ դադարեցնում է տնօրենի լիազորությունները՝ օրենսդրությամբ սահմանված դեպքերում եւ կարգով:

Օրենքի ընդունման դեպքում ակնկալվող արդյունքը. Սույն օրենքի ընդունմամբ ակնկալվում է վերացնել հիշյալ օրենսդրական հակասությունները